ԻԶՀ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՐ

ԻԶՀ Դրամաշնորհ No. TF013656

# ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ ՊՀ ԿՈՂՄԻՑ

# ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՎ

# ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2013թ. հուլիսի 1-ից մինչև 2015թ. դեկտեմբերի 31-ը
ավարտվող ժամանակաշրջանի վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ
Փետրվար 2016

ԻԶՀ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՐ

ԻԶՀ Դրամաշնորհ No. TF013656

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 3-4

ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2013թ.հուլիսի 1-ից մինչև 2014թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի և 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

Դրամական միջոցների ստացումների և ծախսումների մասին հաշվետվություն 5

Ըստ բաղադրիչների ֆոնդերի օգտագործման մասին հաշվետվություն 6

Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 7-15

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԴԾԻԳ-ի ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒՄ 16

# "ՍՕՍ-ԱՈՒԴԻՏ" ՍՊԸ

# "SOS-AUDIT" LTD


## ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

*"ԻԶՀ Դրամաշնորհի Փաստաբանական Դպրոցի Վերապատրաստման Կարողությունների Զարգացման Ծրագրի Համար" 2013թ. հուլիսի 1-ից մինչև 2014թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի և 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ*

Ներկայացվում է Դատաիրավական Ծրագրերի Իրականացման Գրասենյակ (ԴԾԻԳ) ՊՀ ղեկավարությանը

Մեր կողմից իրականացվել ԻԶՀ No.TF013656 Դրամաշնորհի միջոցով ֆինանսավորվող և ԴԾԻԳ-ի կողմից իրականացվող "ԻԶՀ Դրամաշնորհի Փաստաբանական Դպրոցի Վերապատրաստման Կարողությունների Զարգացման Ծրագրի Համար" ծրագրի (Ծրագիր) հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, որոնք ներառում են 2013թ.հուլիսի 1-ից մինչև 2014թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի և 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա դրամական միջոցների ստացումների և ծախսումների մասին հաշվետվությունը, ըստ բաղադրիչների ֆոնդերի օգտագործման մասին հաշվետվությունը, ինչպես նաև հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփը և այլ ծանոթագրություններ:

*Ղեկավարության պատասխանատվությունը հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների համար*

ԴԾԻԳ-ի ղեկավարությունը պատասխանատու է հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար՝ համաձայն Հաշվապահների Միջազգային Դաշնության (ՀՄԴ) Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՀՀՄՍԽ) կողմից հրապարակված «Ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքով» Հանրային Ոլորտի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտի, և Համաշխարհային Բանկի կողմից ֆինանսավորվող ներդրումային գործառնությունների Ֆինանսական Ձեռնարկի (ՀԲ ուղեցույց): Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններ, որոնք զերծ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

*Աուդիտորի պատասխանատվությունը*

Մենք պատասխանատու ենք ՀՄԴ-ի Աուդիտի և Երաշխավորման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ԱԵՄՍԽ) կողմից հրապարակված Աուդիտի Միջազգային Ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա նշված հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Այդ ստանդարտներով պահանջվում է պահպանել վարվեցողության կանոնները և աուդիտը պլանավորել ու անցկացնել՝ հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններում ու համապատասխան ծանոթագրություններում արտացոլված տվյալները հիմնավորող փաստերի ձեռքբերման նպատակով մշակված ընթացակարգեր, որոնց ընտրությունը կախված է խարդախությունների և սխալների հետևանքով հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններում էական խեղաթյուրումների ռիսկերի առկայության վերաբերյալ աուդիտորական գնահատումներից:

Ռիսկերի գնահատումները կատարելիս՝ աուդիտորը մշակում է համապատասխան ընթացակարգեր հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության գնահատման և ոչ՝ ընկերության ողջ ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք կազմելու համար: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և ղեկավարության կողմից կատարված գնահատումների, ինչպես նաև հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:
Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքը արտահայտելու համար:

*Կարծիք*

Մեր կարծիքով՝

1. Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ծրագրի 2013թ.հուլիսի 1-ից մինչև 2014թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի և 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա դրամական միջոցների ստացումները և վճարումները՝ համաձայն «Ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքով» Հանրային Ոլորտի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտի, և Համաշխարհային բանկի ուղեցույցի:
2. Ֆոնդերը օգտագործվել են համաձայն Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի միջև 2013թ. մայիսի 7-ին կնքված ԻԶՀ No. TF013656 նամակ-համաձայնագրում նշված պայմաններից և Համաշխարհային Բանկի համապատասխան ուղեցույցներին համաձայն՝ պատշաճ ուշադրություն դարձնելով տնտեսմանը և արդյունավետությանը, և միայն այն նպատակներով, որոնց համար հատկացվել են:
3. Փոխհատուցման դիմումներում ներկայացված ծախսերը ապահովված են համապատասխան հիմնավորող փաստաթղթերով, գրանցումներով և հաշիվներով: Փոխհատուցման դիմումներում ներառված և փոխհատուցված ծախսերը ընդունելի են ֆինանսավորման համար՝ համաձայն ԻԶՀ No. TF013656 նամակ-համաձայնագրի:
4. Նպատակային հաշիվը վարվել է համաձայն ԻԶՀ No. TF013656 նամակ-համաձայնագրի պայմանների և Համաշխարհային Բանկի համապատասխան ուղեցույցների:

«ՍՕՍ-Աուդիտ» ՍՊԸ
24 փետրվարի 2016թ.

Մանվել Ղազարյան
Տնօրեն

Գնել Խաչատրյան, FCCA
Աուդիտոր

«ՍՕՍ-ԱՈՒԴԻՏ» «СОС-АУДИТ» «SOS-AUDIT» 00051316

**ԻԶՀ Դրամաշնորհի Փաստաբանական Դպրոցի Վերապատրաստման Կարողությունների Զարգացման Ծրագրի Համար**
**ԻԶՀ Դրամաշնորհի No.TF013656**

**Դրամական միջոցների ստացումների և ծախսումների մասին հաշվետվություն**
2013թ. հուլիսի 1-ից մինչև 2014թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի և 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ
*(ԱՄՆ դոլար)*

| | | Փաստացի | | | Նախատեսված | | | Շեղում | | | ԾԳՓ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 01.07.2013-31.12.2014 ընկած ժամանակաշրջան | 31.12.2015 ավարտված տարի | Անողական առ 31.12.2015 | 01.07.2013-31.12.2014 ընկած ժամանակաշրջան | 31.12.2015 ավարտված տարի | Անողական առ 31.12.2015 | 01.07.2013-31.12.2014 ընկած ժամանակաշրջան | 31.12.2015 ավարտված տարի | Անողական առ 31.12.2015 | |
| Դրամական միջոցների սկզբնական մնացորդ | | | | | | | | | | | |
| Նպատակային հաշիվ (ԻԶՀ Դրամաշնորհի) | | - | - | - | | | | | | | |
| Ծրագրի հաշիվ (ՀՀ Կառավարություն) | | - | - | - | | | | | | | |
| Ընդամենը | | - | - | - | | | | | | | |
| Ֆոնդերի աղբյուրները | | | | | | | | | | | |
| ԻԶՀ Դրամաշնորհի No.TF013656 | 8.1 | - | 464,080.70 | 464,080.70 | | | | | | | 468,000.00 |
| ՀՀ Կառավարության համաֆինանսավորում | 8.2 | - | 63,841.86 | 63,841.86 | | | | | | | 93,600.00 |
| Ընդամենը | | - | 527,922.56 | 527,922.56 | | | | | | | 561,600.00 |
| Արտարժութային օգուտ/(կորուստ) | | - | (495.46) | (495.46) | | | | | | | |
| Ֆոնդերի օգտագործում | 7 | | | | | | | | | | |
| 1. Այցանքներ, խորհրդատուների ծառայություններ, ուսուցում, դրամաշնորհի ամենամյա աուդիտ և գործառնական ծախսեր | | - | 356,316.80 | 356,316.80 | - | 399,600.00 | 399,600.00 | - | (43,283.20) | (43,283.20) | 417,600.00 |
| 2. Խորհրդատուների ծառայություններ, դատական գործընթացների ծախսեր և գործառնական ծախսեր իրավաբանական անվճար պիլոտային ծառայության համար | | - | 86,149.68 | 86,149.68 | - | 144,000.00 | 144,000.00 | - | (57,850.32) | (57,850.32) | 144,000.00 |
| Ընդամենը ծրագրային ծախսեր | | - | 442,466.48 | 442,466.48 | - | 543,600.00 | 543,600.00 | - | (101,133.52) | (101,133.52) | 561,600.00 |
| | | | | | | | | | | | |
| Դրամական միջոցների վերջնական մնացորդ | 6 | | | | | | | | | | |
| Նպատակային հաշիվ (ԻԶՀ Դրամաշնորհի) | | - | 82,676.38 | 82,676.38 | | | | | | | |
| Ծրագրի հաշիվ (ՀՀ Կառավարություն) | | - | 2,284.24 | 2,284.24 | | | | | | | |
| Ընդամենը | | - | 84,960.62 | 84,960.62 | | | | | | | |

Գեորգի Խաչատրյան
Գործադիր տնօրեն

Մարինա Գևորգյան
Ֆինանսական ղեկավար

24 փետրվարի, 2016

Ծանոթագրությունների 7-15 էջերը կազմում են այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

**ԻԶՀ Դրամաշնորհ Փաստաբանական Դպրոցի Վերապատրաստման Կարողությունների Զարգացման Ծրագրի Համար**
**ԻԶՀ Դրամաշնորհ No.TF013656**

**Ըստ բաղադրիչների ֆոնդերի օգտագործման մասին հաշվետվություն**
2013թ. հուլիսի 1-ից մինչև 2014թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի և 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ
*(ԱՄՆ դոլար)*

| | Փաստացի | | | Նախատեսված | | | Շեղում | | | ԾԳՓ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 01.07.2013-31.12.2014 ընկած ժամանակաշրջան | 31.12.2015 ավարտված տարի | Աճողական առ 31.12.2015 | 01.07.2013-31.12.2014 ընկած ժամանակաշրջան | 31.12.2015 ավարտված տարի | Աճողական առ 31.12.2015 | 01.07.2013-31.12.2014 ընկած ժամանակաշրջան | 31.12.2015 ավարտված տարի | Աճողական առ 31.12.2015 | |
| 1.Ուսուցման նոր մեթոդների ներմուծում և ուսուցանողների ուսուցման ծրագրի մշակում | - | 273,029.23 | 273,029.23 | - | 313,200.00 | 313,200.00 | - | (40,170.77) | (40,170.77) | 331,200 |
| 2.Ֆինանսական մեխանիզմների և ռազմավարության նախագծման ծրագիր անվճար իրավաբանական օգնության ծառայությունների համար | - | 86,149.68 | 86,149.68 | - | 144,000.00 | 144,000.00 | - | (57,850.32) | (57,850.32) | 144,000 |
| 3.Կայուն ֆինանսական պայմանավորվածությունների նախագծում փաստաբանների դպրոցի ուսուցման և անվճար իրավաբանական օգնության ծառայությունների ծրագրի համար | - | 83,287.57 | 83,287.57 | - | 86,400.00 | 86,400.00 | - | (3,112.43) | (3,112.43) | 86,400 |
| Ընդամենը ծրագրային ծախսեր | - | 442,466.48 | 442,466.48 | - | 543,600.00 | 543,600.00 | - | (101,133.52) | (101,133.52) | 561,600 |

# 1. Ընդհանուր տեղեկություններ

## *1.1. Ծրագիր*

2013թ. մայիսի 7-ին Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի ("ՎԶՄԲ", կամ "ՀԲ") միջև ստորագրվել է No. TF013656 Նամակ-համաձայնագիրը, համաձայն որի ՎԶՄԲ-ն Համաշխարհային Բանկի Ինստիտուցիոնալ Զարգացման Հիմնադրամի (ԻԶՀ) միջոցներից Հայաստանի Հանրապետությանը տրամադրել է 468,000 ԱՄՆ դոլարը չգերազանցող դրամաշնորհ:

Դրամաշնորհը տրամադրվել է "ԻԶՀ Դրամաշնորհ Փաստաբանական Դպրոցի Վերապատրաստման Կարողությունների Զարգացման Ծրագրի Համար" Ծրագրի (Ծրագիր) իրականացման նպատակով:

ԻԶՀ No.TF013656 Դրամաշնորհի կողմից ֆինանսավորման վերջնաժամկետ է սահմանվել 2016թ. մայիսի 31-ը: Փոխհատուցման դիմումների ներկայացման արտոնյալ ժամանակաշրջանը Ծրագրի ավարտից հետո չորս ամիս է:

## *1.2. Ծրագրի նպատակը*

Ծրագրի նպատակն է՝ բարելավել Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոցի կարողությունները, որը ստեղծվել է Համաձայն «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի հետևյալ նպատակներով. ա) նախագծել և ապահովել ուսուցում, բ) տրամադրել անվճար իրավաբանական օգնության ծառայություններ ամենախոցելի խմբերին, և գ) մշակել կայուն ֆինանսավորման պայմանավորվածություններ հիմնական գործունեությանն աջակցելու համար:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ մասերից.

Մաս 1. Ուսուցման նոր մեթոդների ներդնում և ուսուցանողների ուսուցման ծրագրի մշակում,
Մաս 2 Ֆինանսական մեխանիզմների և ռազմավարության նախագծման ծրագիր անվճար իրավաբանական օգնության ծառայությունների համար,
Մաս 3. Կայուն ֆինանսական պայմանավորվածությունների նախագծում փաստաբանների դպրոցի ուսուցման և անվճար իրավաբանական օգնության ծառայությունների ծրագրի համար:

### *1.3. Ծրագրի բյուջե և ֆինանսավորում*

Ծրագիրը ֆինանսավորվում է հետևյալ աղբյուրներից.

- ԻՁՀ No.TF013656 Դրամաշնորհի - 100% առանց հարկերի,
- Հայաստանի Հանրապետության Կառավարություն (ՀՀ Կառավարություն)– հարկեր:

| Կատեգորիա | ԻՁՀ No.TF013656 Դրամաշնորհի | ՀՀ Կառավարություն | Ընդամենը |
|---|---|---|---|
| | USD | USD | USD |
| 1. Ապրանքներ, խորհրդատուների ծառայություններ, ուսուցում, դրամաշնորհի ամենամյա աուդիտ և գործառնական ծախսեր | 348,000 | 69,600 | 417,600 |
| 2. Խորհրդատուների ծառայություններ, դատական գործընթացների ծախսեր և գործառնական ծախսեր իրավաբանական անվճար պիլոտային ծառայության համար | 120,000 | 24,000 | 144,000 |
| Ընդամենը | 468,000 | 93,600 | 561,600 |

### *1.4. Ծրագրի իրականացում*

Ծրագիրը իրականացվում է Դատաիրավական Ծրագրերի Իրականացման Գրասենյակ (ԴԾԻԳ) ՊՀ-ի կողմից:

ԴԾԻԳ-ի գրանցման հասցեն է՝ Թումանյան 21/1, ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն:

## 2. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ

### *2.1. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում և ներկայացում*

Ծրագրի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահների Միջազգային Դաշնության (ՀՄԴ) Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՀՀՄՍԽ) կողմից հրապարակված «Ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքով» Հանրային Ոլորտի Հաշվապահական Հաշվառման Ստանդարտի համաձայն, և ներկայացվել են Համաշխարհային Բանկի կողմից ֆինանսավորվող ներդրումային գործառնությունների Ֆինանսական Ձեռնարկին՝ «RM 3-Ֆինանսական Հաշվետվողականություն և Աուդիտ»-ին (մարտ, 2010) համապատասխան:

Այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ կիրառվել է ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն ներկայացված ժամանակաշրջանների համար:

### *2.2 Հաշվապահական հաշվառման դրամարկղային հիմունք*

Ծրագրի ֆինանսավորումը ճանաչվում է դրամական միջոցների ստացման պահին: Ծրագրի ծախսումները ճանաչվում են որպես Ծրագրի ծախսեր դրանց վճարման պահին:

### *2.3 Ներկայացման արժույթը*

Այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը ԱՄՆ դոլարն է (USD):
Տեղական արժույթով (ՀՀ դրամ, AMD) կատարված ՀՀ Կառավարության համաֆինանսավորումը և ծախսերը փոխարկվում են ԱՄՆ դոլարի գործարքի օրվա դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից սահմանված փոխարժեքով:
Փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը տեղական արժույթով պահվող դրամական միջոցների վրա ներկայացվում է առանձին տողով Դրամական միջոցների ստացումների և ծախսումների մասին հաշվետվության մեջ:

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքը՝ 1 ԱՄՆ դոլար = 474.97 դրամ:

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքը՝ 1 ԱՄՆ դոլար = 483.75 դրամ:

### *2.4. Հարկեր*

Ծրագրի շրջանակներում հարկերը վճարվում են ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով:

### *2.5. Բյուջե*

Ծախսերի բյուջեն կազմվում է նախորդ ժամանակաշրջանի փաստացի կուտակային ծախսերին գումարելով պլանավորումը հաշվետու ժամանակաշրջանի համար՝ ըստ քարմացված գնումների պլանի:

## 3. ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՌՀԱՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (SOE և SUMMARY SHEET)

*2013 թ. հուլիսի 1-ից մինչև 2015 թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի համար*

| Դիմումի համարը | Դիմումի հաստատման ամսաթիվը | Ծախսային հոդված | | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| | | 1. Ապրանքներ, խորհրդատուների ծառայություններ, ուսուցում, դրամաշնորհի ամենամյա աուդիտ և գործառնական ծախսեր | 2. Խորհրդատուների ծառայություններ, դատական գործընթացների ծախսեր և գործառնական ծախսեր իրավաբանական անվճար պիլոտային ծառայության համար | |
| | | *ԱՄՆ դոլար* | *ԱՄՆ դոլար* | *ԱՄՆ դոլար* |
| TFIII-3 | 16.07.2015 | 38,303.95 | 46,177.60 | 84,481.55 |
| TFIII-4 | 17.09.2015 | 85,607.43 | - | 85,607.43 |
| TFIII-5 | 26.10.2015 | 92,770.67 | 4,008.07 | 96,778.74 |
| TFIII-6 | 22.12.2015 | 80,185.30 | 17,027.68 | 97,212.98 |
| Ընդամենը | | 296,867.35 | 67,213.35 | 364,080.70 |

## 4. Նպատակային հաշվի հաշվետվություն

| | |
|---|---|
| Հաշվարկային հաշիվ | 900000929043 |
| Բանկ | Կենտրոնական գանձապետարան |
| Հասցե | Տիգրան Մեծի 4, 1-ին հարկ, Երևան, Հայաստանի Հանրապետություն, 0010 |
| Արժույթը | ԱՄՆ դոլար |

| | ԻԶՀ No.TF013656 Դրամաշնորհի | |
|---|---|---|
| | 2013թ. հուլիսի1-ից 2014 թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի համար | 2015թ. դեկտեմբերի 31–ին ավարտված տարվա համար |
| 1. Սկզբնական մնացորդ | - | - |
| 2. Ավելացում. սկզբնական անհամապատասխանություն | - | - |
| 3. ՎԶՄԲ ֆոնդի կանխավճար/համալրում | 100,000.00 | 464,080.70 |
| 4. Նվազեցում. Նպատակային հաշվից մարում ՎԶՄԲ -ին | (100,000.00) | - |
| **5. Նպատակային հաշվին համալրված գումարի ներկա մնացորդը** | **-** | **464,080.70** |
| 6. Նպատակային հաշվի վերջնական մնացորդ | - | 82,676.38 |
| 7. Ավելացում. վճարված ընդունելի ծախսերի գումար | - | 381,404.32 |
| 8. Նվազեցում. ստացված տոկոսներ (եթե կրեդիտագրվել են նպատակային հաշիվ) | - | - |
| **9. Ընդամենը հաշվառված համալրում** | **-** | **464,080.70** |
| 10. Տարբերություն (5)-(9) | - | - |

Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2013թ. հուլիսի 1-ից մինչև 2014թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի և 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ
*(ԱՄՆ դոլար)*

## 5. Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը ներառում է ակտիվները, պարտավորությունները և Ծրագրի զուտ ակտիվները հաշվետու ամսաթվի դրությամբ: Հաշվետվությունը պատրաստված է հաշվեգրման սկզբունքով, որտեղ գործարքները ճանաչվում են կատարման պահին (այլ ոչ՝ ստացման կամ վճարման պահին):

| | | 31.12.2015<br>ԱՄՆ դոլար | 31.12.2014<br>ԱՄՆ դոլար |
|---|---|---|---|
| **ԱԿՏԻՎՆԵՐ** | | | |
| Դրամական միջոցներ | 6 | 84,960.62 | - |
| Կանխավճարներ | | 3,909.69 | - |
| Ընդամենը ակտիվներ | | 88,870.31 | - |
| **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | | |
| Կրեդիտորական պարտավորություններ | | 4,206.84 | - |
| Ընդամենը պարտավորություններ | | 4,206.84 | - |
| **ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ** | | | |
| Աճողական մուտքեր | | | |
| ԻԶՀ No.TF013656 Դրամաշնորհի | | 464,080.70 | - |
| Հայաստանի Կառավարություն | | 63,841.86 | - |
| | | 527,922.56 | - |
| Աճողական ծախսումներ | | | |
| Ծրագրի ծախսումներ | | (441,890.46) | - |
| | | (441,890.46) | - |
| Արտարժույթի փոխարժեքային տարբերություն | | (1,368.63) | - |
| Ընդամենը զուտ ակտիվներ | | 84,663.47 | - |

## 6. Դրամական միջոցներ

| | Բանկ | Արժույթը | 31.12.2015<br>ԱՄՆ դոլար | 31.12.2014<br>ԱՄՆ դոլար |
|---|---|---|---|---|
| Նպատակային հաշիվ ԻԶՀ No.TF013656 Դրամաշնորհի) | Գանձապետարան | ԱՄՆ դոլար | 82,676.38 | - |
| Ծրագրի հաշիվ (ՀՀ Կառավարություն) | Գանձապետարան | ՀՀ դրամ | 2,284.24 | - |
| Ընդամենը | | | 84,960.62 | - |

Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2013թ. հուլիսի 1-ից մինչև 2014թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի և 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ
*(ԱՄՆ դոլար)*

## 7. Ծրագրային ծախսեր

### 7.1. *Ծրագրային ծախսերի բաշխումը ըստ ֆոնդերի*

| Ծախսային հոդվածներ | 2013թ. հուլիսի1-ից 2014 թ.դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի համար | | | .2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար | | | Կուտակային 31.12.2015թ. դրությամբ | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ԻԶՀ No.TF013656 Դրամաշնորհի | ՀՀ Կառավարություն | Ընդամենը | ԻԶՀ No.TF013656 Դրամաշնորհի | ՀՀ Կառավարություն | Ընդամենը | ԻԶՀ No.TF013656 Դրամաշնորհի | ՀՀ Կառավարություն | Ընդամենը |
| | *ԱՄՆ դոլար* | *ԱՄՆ դոլար* | *ԱՄՆ դոլար* | *ԱՄՆ դոլար* | *ԱՄՆ դոլար* | *ԱՄՆ դոլար* | *ԱՄՆ դոլար* | *ԱՄՆ դոլար* | *ԱՄՆ դոլար* |
| 1. Ապրանքներ, խորհրդատուների ծառայություններ, ուսուցում, դրամաշնորհիի ամենամյա աուդիտ և գործառնական ծախսեր | - | - | - | 296,867.35 | 59,449.45 | 356,316.80 | 296,867.35 | 59,449.45 | 356,316.80 |
| 2. Խորհրդատուների ծառայություններ, դատական գործընթացների ծախսեր և գործառնական ծախսեր իրավաբանական անվճար պիլոտային ծառայության համար | - | - | - | 84,536.97 | 1,612.71 | 86,149.68 | 84,536.97 | 1,612.71 | 86,149.68 |
| Ընդամենը | - | - | - | 381,404.32 | 61,062.16 | 442,466.48 | 381,404.32 | 61,062.16 | 442,466.48 |

Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2013թ. հուլիսի 1-ից մինչև 2014թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի և 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ
*(ԱՄՆ դոլար)*

*7.2. Ծրագրային ծախսերի բյուջեի կատարում*

| Ծախսային հոդված | Անողական ծախսումներ 31 դեկտեմբերի 2015թ. դրությամբ | Ընդամենը բյուջե | Կատարում |
|---|---|---|---|
| | ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլար | % |
| 1. Ապրանքներ, խորհրդատուների ծառայություններ, ուսուցում, դրամաշնորհի ամենամյա աուդիտ և գործառնական ծախսեր | 356,316.80 | 417,600.00 | 85 |
| 2. Խորհրդատուների ծառայություններ, դատական գործընթացների ծախսեր և գործառնական ծախսեր իրավաբանական անվճար պիլոտային ծառայության համար | 86,149.68 | 144,000.00 | 60 |
| Ընդամենը | 442,466.48 | 561,600.00 | 79 |

## 8. Ֆինանսավորում

### *8.1. Դրամաշնորհ ԻԶՀ No.TF013656*

| | 2013թ. հուլիսի1-ից 2014 թ.դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի համար | 31.12.2015 ավարտված տարի | Անողական առ 31.12.2015 |
|---|---|---|---|
| | ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլար |
| Կանխավճար / (մարում) | - | 100,000.00 | 100,000.00 |
| SOE և Summary Report | - | 364,080.70 | 364,080.70 |
| Ընդամենը | - | 464,080.70 | 464,080.70 |
| Ընդամենը բյուջե | | | 468,000.00 |
| Առ 31.12.2015 տրամադրված ֆինանսավորում % | | | 99% |

### *8.2. ՀՀ Կառավարություն*

| | 2013թ. հուլիսի1-ից 2014 թ.դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի համար | 31.12.2015 ավարտված տարի | Անողական առ 31.12.2015 |
|---|---|---|---|
| | ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլար |
| Ֆինանսավորում | - | 63,841.86 | 63,841.86 |
| Ընդամենը բյուջե | | | 93,600.00 |
| Առ 31.12.2015 տրամադրված ֆինանսավորում % | | | 68% |

## 9. Չներկայացված ծախսեր

Հաշվետու ժամանակաշրջանում կատարված 17,323.62 ԱՄՆ դոլար ընդհանուր գումարով ծախսերի համար այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվության ստորագրման ամսաթվի դրությամբ առհանման դիմում չի ներկայացվել:

## ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԱՖԾԿԿ-ի ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒՄ

2013թ. հուլիսի 1-ից մինչև 2014թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի և 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ
*(ԱՄՆ դոլար)*

| Ծախսային հոդված | Դիմում | ԴԾԻԳ | ՀԲ | Տարբերություն |
|---|---|---|---|---|
| Կանխավճար | TFIII-1 | 100,000.00 | 100,000.00 | - |
| | Refund | (100,000.00) | (100,000.00) | - |
| | TFIII-2 | 100,000.00 | 100,000.00 | - |
| | | 100,000.00 | 100,000.00 | |
| 1. Ապրանքներ, խորհրդատուների ծառայություններ, ուսուցում, դրամաշնորհի ամենամյա աուդիտ և գործառնական ծախսեր | TFIII-3 | 38,303.95 | 38,303.95 | - |
| | TFIII-4 | 85,607.43 | 85,607.43 | - |
| | TFIII-5 | 92,770.67 | 92,770.67 | - |
| | TFIII-6 | 80,185.30 | 80,185.30 | - |
| | | 296,867.35 | 296,867.35 | |
| 2. Խորհրդատուների ծառայություններ, դատական գործընթացների ծախսեր և գործառնական ծախսեր իրավաբանական անվճար պիլոտային ծառայության համար | TFIII-3 | 46,177.60 | 46,177.60 | - |
| | TFIII-5 | 4,008.07 | 4,008.07 | - |
| | TFIII-6 | 17,027.68 | 17,027.68 | - |
| | | 67,213.35 | 67,213.35 | |
| Ընդամենը | | 464,080.70 | 464,080.70 | |